

# Առաջին անգամ՝ առաջին դասարան



Երբ երեխան առաջին անգամ է գնում դպրոց, դա մեծ իրադարձություն է ոչ միայն նրա, այլ նաև երեխայի ծնողների համար: Ինչպե՞ս երեխային պատրաստել նոր կյանքի և նրա առաջին սեպտեմբերի 1-ը իսկական տոն դարձնել: Սեպտեմբերի 1-ը առաջին դասարանացու համար յուրօրինակ մուտք է դեպի նոր, մեծ ու չբացահայտված աշխարհ, որը կփոխի մինչ այդ նրա մոտ ձևավորված կարծիքը կյանքի, աշխարհի մասին, որտեղ երեխան կսկսի շփվել իրեն անծանոթ մեծ քանակությամբ մարդկանց հետ, աշխարհ, որը յուրաքանչյուր օր նրա համար նորանոր հաճելի ու տհաճ անակնկալների աղբյուր է դառնալու:

Այդ իսկ պատճառով ցանկալի է երեխային ևախօրոք պատրաստել դպրոց հաճախելուն: Շատ կարևոր է, որ երեխան արդեն սեպտեմբերի 1-ին փոքր-ինչ պատկերացում ունենա, թե ինչ է իրենից ներկայացնում դպրոցը: Հարգելի ծնող, պատմեք երեխային դպրոցի մասին՝ առանց ճոխացնելու և առանց վախեցնելու: Հիշեք սեփական դպրոցական տոներն ու նվերները, անակնկալներն ու առաջին գնահատականները: Պատմեք, թե ինչ լավ է դպրոցական լինելը:

Անհրաժեշտ է նաև երեխային ծանոթացնել մի քանի կարևոր պահերի հետ, որոնց նա առնչվելու է կյանքի այս փուլում: Ամենակարևորը դպրոցական ռեժիմն է՝ շուտ պառկել քնելու, որպեսզի վաղ արթնանա: Ցանկալի է երեխայի մոտ խանդավառություն առաջացնել դպրոցի հանդեպ: Պատմեք երեխային դպրոցական կյանքի մասին՝ նոր ընկերների, խելացի ուսուցչուհու, գրենական պիտույքների ու գրքերի մասին: Իսկ տնային պայմաններում երեխայի համար պետք է ստեղծել նոր պարտականություններ: Երեխան կարող է արդեն ինքնուրույն հավաքել իր սենյակը, լվանալ ափսեները և այլն: Կարևորը, որ երեխայի մոտ առաջանա այնպիսի զգացողություն, որ ինքն արդեն մեծ է և ինքուրույն:

## Խորհուրդներ ծնողներին



– Խթանեք երեխայի դպրոցական դառնալու ցանկությունը: Ձեր անկեղծ հետաքրքրվածությունը նրա դպրոցական առօրյայի ու հոգսերի նկատմամբ, լուրջ մոտեցումը երեխայի առաջին ձեռքբերումների և հնարավոր բարդությունների նկատմամբ նորաթուխ դպրոցականին կօգնեն հաստատվել նոր իրավիճակին:

– Երեխայի հետ քննարկեք բոլոր այն կանոններն ու օրենքները, որոնց նա հանդիպել է դպրոցում: Բացատրեք դրանց կարևորությունն ու անհրաժեշտությունը:

– Ձեր երեխան դպրոց է հաճախում՝ սովորելու համար: Յանկացած մարդ սովորելիս կարող է անմիջապես չընկալել ինչ-որ բան, դա բնական է: Երեխան իրավունք ունի սխալվելու:

– Երեխայի հետ միասին կազմեք նրա առօրյա կարգուկանոնը և հետևեք դրա իրականացմանը:

– Ուշադիր եղեք երեխայի դժվարությունների հանդեպ և աշխատեք դրանց լուծում տալ: Օրինակ, եթե երեխան ունի լեզվական խնդիրներ և կարիք ունի լոգոպեդի, փորձեք դպրոցական առաջին իսկ տարում լուծել այդ խնդիրը:

– Խրախուսեք երեխային, եթե նրա մոտ ցանկություն է առաջանում լինել ամենաառաջինը: Յուրաքանչյուր աշխատանք կատարելիս անպայման կգտնվի ինչ-որ բան, որի համար կարելի է երեխային գովել: Հիշեք, գովասանքն ու հուզական աջակցությունը («Կեցցես», «Շատ լավ կատարեցիր աշխատանքդ») կարող են նկատելիորեն բարձրացնել մարդու գիտական նվաճումները:

– Եթե երեխայի պահվածքի կամ նրա ուսումնական գործընթացի մեջ ինչ-որ բան Ձեզ անհանգստացնում է, խորհրդի համար դիմեք ուսուցչուհուն կամ դպրոցական հոգեբանին:

– Դպրոցական կյանք մտնելով, երեխայի կյանքում հայտնվում է մի անձնավորություն, ով նրա համար դառնում է երկրորդ ծնող: Դա ուսուցիչն է: Մի խանդեք և հարգեք Ձեր երեխայի կարծիքն իր ուսուցչի մասին:

– Ուսուցումը բարդ ու պատասխանատու գործ է: Դպրոց ընդունվելով

Երեխայի կյանքը զգալիորեն փոխվում է: Սակայն դա չպետք է երեխային զրկի կյանքի բազմազանությունից, ուրախություններից ու խաղերից: Առաջին դասարանցիները պետք է բավականաչափ ժամանակ ունենան խաղերի համար:

Դուք, ինչպես ոչ ոք, ճանաչում եք Ձեր երեխային: Լսեք նրան, փորձեք հասկանալ նրա զգացմունքներն ու հոլյազերը: Եվ միայն այդ դեպքում սեպտեմբերի 1-ը իսկական տոն կդառնա և՛ Ձեր, և՛ ձեր փոքրիկի համար:

### **Երեխան ադապտացվում է դպրոցին**

Հայտնի է, որ երեխայի առաջին օրերը դպրոցում ամենաբարդ ու հուզական ժամանակաշրջանն են առաջին դասարանցու ընտանիքի համար: Ոչ բոլոր փոքրիկներն են հեշտությամբ հարմարվում դպրոցին: Առաջին դասարանցիների նախադպրոցական պարտրաստվածության ու դպրոցական ծրագրի արագ տեմպի պայմաններում երեխայի դպրոցին հարմարվելու գործընթացում առաջանում են լրացուցիչ արգելքներ:

Երբ առաջին դասարանցին մտնում է դպրոց, շատ կարևոր է, որպեսզի նրա պայուսակում լինեն բոլոր անհրաժեշտ գրենական պիտույքները: Դա կօգնի երեխային ճիշտ դիրք գրավել դասարանում:



Ուսման առաջին տարին փոքրիկի համար կլինի նոր ծանոթությունների, համադասարանցիներին ու ուսուցիչներին հարմարվելու տարի, ստեղծագործական հաջողությունների ու նորանոր հայտնագործությունների տարի:

Բոլորս էլ ցանկանում ենք, որպեսզի երեխայի դպրոցական կյանքը լի լինի միայն դրական հոլյազերով: Դրա համար ինքներս պետք է ստեղծենք այնպիսի պայմաններ, որպեսզի երեխան հաճույքով հաճախի դպրոց ու շփվի համադասարանցիների և ուսուցիչների հետ:

Եթե երեխան չի կարողանում պատասխանել հարցերին, մի մտահոգվեք և

մի բորբոքվեք: Հաշվի առեք այն հանգամանքը, որ մանկապարտեզի դաստիարակչուհին ու դպրոցի ուսուցիչը նույն երեխային կարող են տարբեր տեսանկյունից ընկալել. երեխայի համար վերաբերմունքի նման փոփոխությունը կարող է ցավոտ լինել՝ նա իրեն կորցրել է, չի հասկանում, թե այժմ ի՞նչ է ճիշտ, իսկ ինչը՝ սխալ: Աջակցեք երեխային նման իրավիճակում:

Երեխան չպետք է վախենա սխալվելուց: Փորձեք երեխայի մոտ վախի զգացում չառաջացնել սխալվելու նկատմամբ: Ցանկացած մարդ սխալական է: Վախի զգացումը վատ խորհրդական է: Այն ճնշում է երեխայի նախաձեռնելու հատկությունը, սովորելու ցանկությունը:



Մի համեմատեք երեխային ուրիշ երեխաների հետ, գովաբանեք նրա հաջողությունները: Ընդունեք, որ ձեր երեխան անհատ է և իրավունք ունի մյուսներից տարբերվել: Երբեք մի համեմատեք տղաներին ու աղջիկներին, որպես օրինակ մի բերեք մեկը մյուսին. նրանք տարբեր են նույնիսկ կենսաբանական տարիքով՝ սովորաբար աղջիկներն

ավելի հասուն են իրենց հասակակից տղաներից:

Հիշեք. Ձեր երեխան դպրոցում սովորելու է ոչ այնպես, ինչպես Դուք եք սովորել: Երբեք երեխային մի անպատվեք ինչ-որ բան չհասկանալու կամ չկարողանալու համար: Միայն դրական գնահատեք Ձեր փոքրիկի ուսման ընթացքը, նույնիսկ այն դեպքում, երբ, ըստ Ձեզ, նրա առաջընթացն ու հաջողությունները բավականաչափ չեն:

Ձեր երեխայի հետ միասին ապրեք նրա հույզերը՝ տխրեք նրա անհաջողությունների և ուրախացեք նույնիսկ ամենաչնչին հաջողությունների համար: Եղեք Ձեր փոքրիկի ընկերը, և, միայն այդ դեպքում, Ձեր երեխան կլինի Ձեր ընկերը:

Սովորեք Ձեր երեխայի հետ միաժամանակ: Միասնական եղեք նրա հետ անհաջողությունները հաղթահարելիս: Երբեք որպես դիտորդ մի մոտեցեք նրա դպրոցական կյանքին: Հավատացեք երեխային, վստահեք ուսուցչին:

Որպեսզի երեխան զգա Ձեր աջակցությունը, սերն ու ուշադրությունը, որպեսզի նա իրեն պետքական ու հարազատ զգա, անպայման նրան գովաբանեք ու Ձեր սիրո մասին խոսքեր ասեք: Դա կօգնի երեխային ավելի ոգևորված սովորել ու հաճույքով դպրոց հաճախել:

Եթե երեխան դժվարանում է շփվել համադասարանցիների հետ, ապա հաճախ նրանց հրավիրեք ձեր տուն՝ ոչ ամբողջ դասարանը, այլ փոքր խմբերով: Կազմակերպեք միացյալ հետաքրքիր խաղեր: Դա կմոտեցնի երեխաներին, միմյանց հանդեպ համակրանք կստեղծի:



Եթե երեխան ցածր գնահատական է ստանում, մի բարկացեք և մի նյարդայնացրեք երեխային, այլ փորձեք միասին փնտրել անհաջողության իրական պատճառները: Նման պատճառներից են դանդաղ կոտորությունը, անուշադրությունը, ոչ կոկիկ պահվածքը:

Եթե երեխան չի սիրում սովորել, դադարեք նկատել նրա անհաջողությունները: Ձեր ուշադրությունը բևեռեք այն հաջողությունների վրա, որոնց նա հասել է ուսումնի ընթացքում: Աջակցեք նրան, սեփական ուժերի հանդեպ հավատ ներշնչեք:

Եթե երեխան հիվանդացել է կամ բաց թողել դասերը, զանգահարեք համադասարանցիների ծնողներին ու հնարավորինս տեղեկացեք բաց թողնված ուսումնական գործընթացի մասին: Դասերից հետո մոտեցեք ուսուցչին և ճշտեք, թե տնային աշխատանքների ժամանակ հատկապես ինչի՞ վրա պետք է ուշադրություն դարձնել՝ բաց թողնվածը լրացնելու համար: